ՀԱՑԱՆՈՒՆ ԳԻՒՂԱԿ ՄԸ
(Armeno)

Ալպեանները Ոպիտակ լերան իտալական զառիվայրի փեշերուն վրայ փռուած է գրաւիչ անունով գիւղակը. Armeno: Բիէմոնթէի նահանգին Նովարայի գաւառն է որ զայն կը շրջապատէ: Վճիտ աղբիւրի մէջ ինքնիրմով հմայուած եղնիկի նման, 523 բնակչափ բարձրութենէն կարկառած է դէպի հովիտները մէջ ընկղմանած կաթոտաչուի Որթայի փոքրիկ լճակը: Այդ միևնոյն լճակին մէջ կը նային և Ոպիտակ լեռը և Ալպեաններու զորշակապոյտ շղթաները: կարմիր—կապոյտ—սպիտակ:

Ինծ համար այս գիւղին անունը մի հայրենասիրական խորհուրդ էր ու նաև հանելուկ մը պատմագիտական:

Ուխտականի հաւատքով, մի քանի աշակերտներու հետ գնացի իմ փափաքը գոհացնելու համար, քանի որ առիթն ունէի լակոմաճխիրքի[1] վրայ ամառուան արձակուրդն անցնելու:

Շատ քիչ հեռու է Ալմենոն լակոմաճխիրքէն, շուրջ 50 մղոն, մանուածապատ ճամբայով մը որ կը քերէ լազուարթ լեռներու քղանցքները և լճերու շրթունքները, ու կ'անցնի խառը—Հելուետական սահմանին կից Ալպեաններու խորանիստ հովիտներէն, և աղեղի ձև առած կ'ոլորի դէպի արևմուտք, ու կը մտնէ Որթայի լճակին կանանչ ծոցիկը:

Այնտեղ լճակի ձախ ափունքէն դէու շուրջ 7 մղոն վեր բարձրանալով թուփերու և սեպաձև ժայռերու մէջէն, ճամբորդի աչքին կը պարզուի երկու բլրակներու լծակին վրայ տարածուած գիւղակ մը: Ընկուզենիներու և կաղնիներու թաւ ոստեր իջած են կիսախարխուլ տանիքներու և նորաշէն ամարանոցներու վրայ: Ահա դաշտային ճամբաներ զանազան կողմերէն հոն կը դիմեն և երկայն ու շիտակ պողոտայի վերածուած կը հանգուցուին գեղակին ճիշդ կեդրոնը. ճամբուն դէմը կը բարձրանայ գիւղապետարանի նորաշէն պալատը կարմիր—դեղին երիզներով ներկուած:

Բարձրացուցինք գլուխնիս այդ պալատին յանդիման, և ահա կանգնուածև տառերով սևագոյն գրուած էր **Armeno!** Ալմենոյ, սարսուռ և յուզում անցաւ մեր հոգիէն, ու խոնարհեցանք բարեպաշտ յարգանքով այդ մեր էութիւնը խորհրդանշող գրերուն առջև: Ալմենոյ, կարելի՞ է զլանալ ազգ մը որ այնքան խոր զգացուի իր հայրենի անունին համար որքան մենք կը զգանք. տառապանքներն գրեթէ օրէ օր կը գեղեցկացնեն, սիրելի և տանջուած անուն:

Հազարումէկ կանխահաս խորհրդածութիւններ մեր միտքն ակամայ յորդել և շատ կապեր կը ստեղծէինք Հայաստանի և այս անշուք գիւղակին մէջ: Անցնող դարձողներու վրայ հայու աչքեր, քիթ ու գոյն կը փնտռէինք: երևակայութիւնը շատ սիպեր ստեղծեց: Զմեզ օտար չէինք զգար:

Ժամը ճիշդ 13 էր, չորս աշակերտներ և ես քաշեցինք մեր հեծանիւները ճաշարան մը, հանգչելու և ճաշելու համար:

Ճաշարանին տէրը կարճահասակ և գիրուկ ծերունի մը, նոյնպէս գիրուկ պառաւ մ'ալ իր կողէն փրցուած, լայնաշուրթն բիբան բերանը՝ զմեզ զարմանքով ողջունեց, կեանքին մէջ առաջին անգամն էր որ մօրուքով կղերական կը տեսնէր:

Դաշտեցիի պարզ հոգիով շուտ կապուեցաւ մեզ հետ, բայց թովմասին պէս անհաւատ էր մեր հայ ըլլալուն: — Ոչ,

1. Մխլանոյի Մխիթ. Վարժ. աշակերտները երեք տարի է որ այդ լճին վրայ՝ Լուինոյի մէջ կ'անցընեն իրենց մեծ արձակուրդները.

digitised by A.R.A.R.@

հայ (armeno) մենք ենք կը պատասխանէր ծերունին գլխով և ոտքով։ — Մենք ալ հայ ենք ըսինք։ — Դուք հայ չէք, ե՛ս հոս ծնած եմ, ես հայ եմ։

Մենք կատակելու և զուարճանալու հաճոյք ունէինք։ Ծերունիին երէց որդին, ինքն ալ գիւղուկ, գիտնականի լրջութեամբ այս փոքրիկ միջադէպը պարզեց, ծերունին համոզուեցաւ և նոր յաճախորդ վաստկողի զուարթ դէմքն առաւ։

ԱՐՄԵՆՈՒ — վիրափոխման տաճարը ծակատէն առնուած։

Ոչինչ զմեզ այնքան կը հետաքրքրէր, ինչպէս նաև ընթերցողը, որքան Armenoի հիմնարկութեան հանելուկը։

Գիւղի պատմութիւնն ու գիտութիւնը ժողովրդապետն էր։ Ասկայն հակառակ հոն բոլորած երեսուն տարիներու հովուութեան, աւանդութենէ զատ ոչինչ չէր գիտեր, և գիտնալու ալ տրամադրութիւն չունէր։

Ըստ աւանդութեան, ըսաւ Նա, գիւղը հիմնուած է Ե. դարուն Ս. Ծուլիոս վկայէն որ Ծունաստանէն եկաւ այս կողմերը քրիստոնէութիւն քարոզեց, և ապա հոս հիմնեց փոքրիկ մատուռ մը որուն վրայ յետոյ շինեցին այն եկեղեցին զոր կը տեսնէք հոն վարը ընկուզենիներու տակ։ Նոյն տաբերը հիմնած է նաև Որթայի լճակի մէջ Ս. Ծուլիոս[1] կղզին ու եկեղեցին, որ մինչև այսօր ալ նոյն անունը կը կրէ։

— Ինչո՞ւ համար «Armeno» անունը կրած է, եթէ հիմնադիրը յոյն էր, հարցուցինք։

— Այդ մի կարծէք թէ հայ ազգի անունով կնքուած է, ո՛չ, աւանդութիւնը ձեզ հետ առընչութիւն չունեցող երեք կարծիք ունի ատոր համար։ Մին՝ թէ ժամանակին այս կողմերը խաչնարածի տեղեր էին (յատկերէն հոս՝ armento կ'ըսեն), և այդ Armento բառն աղաւաղուելով եղած ըլլայ Armeno։ Երկրորդ մը՝ թէ առաջ եկած ըլլայ Armamento (սպառազինութիւն) բառէն նոյնպէս զարկու մէջ իանգարուելով։ Բայց որ հաւանականագոյնն է, ըսաւ, կազմուած է Arcimeno բառէն։ կը տեսնէք ըսաւ, յուզմամբ երկարելով դէպի բլուրէն վար, այն սիրուն գիւղակը որ հեշտօրէն պառկած է ծառերուն տակ. նա կը կոչուի Ameno (= սիրուն, գեղեցիկ) և որպէս զի ցուցնեն այս մեր գիւղացիք թէ իրենց գիւղն աւելի սիրուն է, զայն կոչեր են Arci–meno, որ՝ դարերով ci մասնիկը կորսնցնելով եղած է Armeno։

Ինչ որ կը տեսնուէր, այս կոչումները յարմարցուած էին պատահաբար նմանութենէն եղած անունը բացատրելու համար։ Դժբախտաբար քաղաքական դիւանը 1600ին հրդեհուած՝ ոչ մէկ վաւերագիր կը պահէր։ Իսկ եկեղեցւոյ մկրտութեան տետրակին հնագոյն թուականն էր 1655ը, ուր ընտանիքներու անունները բոլորովին իտալական էին, և մեծամասնութիւնը դեռ ցեղ ցեղ կը շարունակուէին։

Մեզ համար միակ մոռացումի քաղը

---

1. Դժբախտաբար ժամանակի պակութեան համար, չըկարողացանք տեսնել այդ կղզին որ կարող էր հին եկեղեցիով մը առաջացած նպաստակը հոս տեսնել լուսաւորչ։

digitised by A.R.A.R.@

պատող յուշարձանը կը մնար, գիւղէն դուրս արևելեան կողմը միայնակ կանգնած հնադարեան եկեղեցին, Նուիրուած Տիրամօր Վերափոխման։

Եկեղեցւոյ ճարտարապետական յօրինուածքը արևելեան ըլլալու յայտնի ոճն ունի։ Իւ դա այնքան պարզ որ շատ մը տեղագրողներ իսկ առանց վարանելու զայն Բիւզանդական ճարտարապետութիւն կոչած են իրենց հարևանցի ակնարկներուն մէջ։ Դժբախտաբար ոչ մէկ լուրջ ուսումնասիրութիւն կատարուած է այս պատկառելի տաճարի մասին։ Ի. Ծուլիոս՝ ըստ ժողովրդապետի պատմածին, այս միևնոյն եկեղեցւոյն տեղ կանգներ է մի փոքր մատուռ, ինչպէս վերն ակնարկեցինք, ճիշդ մուտքի վրայ երկարած հիսնեայն հարուր, որի վրայ ազուցեր են ներկայ եկեղեցին 13ր դարի ժամանակները՞, դէպի արևելք դարձնելով աւագ խորանը։

Ներս կը մնենք նախագաւիթէ մը՝ ժամանակով շատ նոր։ Աւագ դուռը փայտաշէն բաւական լաւ դրուագուած՝ և մանաւանդ ձգուած է։ Դրան երկու կողմը նկարուած են որմի վրայ պատկերներ, մին Տիրամայրը պատկ ի գլուխ և Յիսուս Մանուկը գիրկը Բիւզանդական գծերով, միւսը աւրուած ըլլալուն կարելի չեղաւ որոշ գաղափար մը կազմել։

Եկեղեցւոյն ներսը կը բաղկանայ մի խոշոր կամարակապէ, որ սկսելով մուտքէն կը վերջանայ աւագ խորանի առջև բռնելով երկարութեան 3 4ը և այնտեղ կը ձևանայ լատինական խաչը։ Կեդրոնի երկու կողմը կան աւելի ցածկել կամարակապեր բաժնուած կեդրոնէն սիւներով։

Որմերու քերծուած տեղերէն կը տեսնուէին երեք խաւ տումկանկարներ զանազան դարերու գործ, որմնկարը այսպէս յաճախուած էր աւելի այն մասին մէջ որ հին մատուռին կը պատկանէր։ Նկարներ կային նաև սիւներու վրայ, մասնաւորապէս մին շատ լաւ պահուած։

Այնտեղ կը տեսնուէին վերջին դարու նկարներու մէջ երեք հատ (?) Ս. Բարթողոմէոս, և երեք (?) հատ ալ (Ս. Յոհաննես) կամ Ս. Լաւրենտիոս, իւաչելուեան, առաքեալներու և այլ սուրբերու կիսամարմ նկարներ։ Ո՛ր դարու ըլլալը, վճռելը աւելի ձեռնհաս ուսումնասիրութեան կը կարօտի։ Աւաղ որ շատերը բոլորովին եղծուած են, և մեծ մասով ալ ճերմակ ծեփով դեռ ծածկուած կը մնան ժանուախտի ժամանակ կատարուած 17ր դարուն։ Ներսով շատ անխնամ ձգուած պատկեր մը կը ներկայացնէ, խորանները բոլորովին արդիացած են։ Ներկի հաստատակաց գործածութենէն զրկուած է։

Արձանագրութեան ոչ մէկ գիր կայ, ոչ լատիներէն, ոչ յունարէն և ոչ հայերէն։ զարմանալի անգրագիտութիւն կը տիրէ։ Հին գերեզմաններուց մը կայ եզեր այն ալ քակեր և տապանաքարերը ցրուեր ոչնչացուցեր են բարբարոս հոգիով, տեղը դնելով նոր մը գիւղական անպաճոյճ տեսքով։

Ո՛ւրիշն հոս մենք հայկական ոչինչ չըտեսանք։

Եկեղեցւոյ արտաքին մասը իր զարդերով և ճարտարապետական կազմով շատ ու շատ լոյսեր կարող էր տալ մեր առաքելագրած նպատակին։ Նախ ճակատի քանդակութիւնը շատ նման է հայկական-Բիւզանդական ոճին, պատուհանները բոլորովին արևելեան են։ Բայց ինչ որ ամենէն զարմանալի և անծխտելի փաստ թերևս կազմէ այդ եկեղեցւոյ, և հետեւաբար գիւղին հայկական ծագում ունենալուն, են տանիքի քիւը զարդարող այն քարէ գերաններու խոյակները որ ընթերցողը կը նշմարէ եկեղեցւոյ ճակատի վրայ։ Կտոնք ան փխրուն քարէ շինուած խոյակներ են այլազան պատկերներով։ Անտեղ կային մարդու գլուխներ, թևաքաց արծիւներ, երկգլուխ և ոլորուն եղջիւրներով Հայաստանի խոյը, հայ ոչխարին լայն և իւղոտ դմակը, ոմանք կիսովին աւրուած, ոմանք իրենց կատարեալ թարմութեան մէջ։

Խոյակները եկեղեցւոյն բոլոր արտաքին շրջապատը չեն բռներ, ժամանակաւ այդպէս է եղեր, այժմ քանդուեր և ինկեր են շատ տեղեր։

digitised by A.R.A.R.@

Միայն ճակատի կողմն անարատ մնացեր են։

Իրենց պատկերացումը փորագրուած է ուղիղ գծերու դրութեամբ, չկայ վարպետ ձեռք մը։ Մանաւանդ թէ անկատար ուուեստի մը տկարութիւնը մտնանչող չատ կէտեր ունի։ Իրենց յօրինուածով բաւական նման են մեր Աղթամարի Ս. Խաչի բարձրաքանդակներուն, ինչպէս նաև հայկական խաչքարերուն, ոճի քիչ մը պակաս նրբութեամբ։

Իտալական մոդի և ձեռքի յղացում բացարձակապէս չկին։ Միեղք որ բարձր ըլլալնուն չկարողացանք ընթերցողներուն ներկայացնել ցայտուն նմոյշ մը, մանաւանդ որ լուսանկարի գործիքնիս ալ չատ փոքր էր։

Կոզակի արուաքին կողմը բոլորաձև է և դուրս ցցուած պատով կամար կապուած։ Ահռաւարակ ամրողջ շէնքը քառակուսի մութ մոխրագոյն քարերով շինուած է, քաղաքրմով զատուած քովի անդերէն։

Հիւսիսային կողմը կը բարձրանայ գեղեցիկ կամարիկներով վերջաւորուած գանգակատուն մը, թերևս նախորդ մատուռին ժամանակակից ըլլայ, կ'ըսէր ժողովրդապետը, սակայն առանց փաստի էր։ Ձարտարապետութեամբ բոլորովին իտալական էր։

Եկեղեցւոյն հայկական կամ ոչ ըլլալուն ստոյգ լուսաբանութիւն մը թերևս Նովարայի Նահանգական դիւանը կարենայ տալ, ինչպէս նաև որմնկարներու վերաբացումէն չատ բան կարելի է յուսալ։ այսպէս անհնամ թողուած, ոչ մէկ լուրջ հետաքրքրուող եղած հնութեան մը առջև, լոկ կարծիքներ կարելի է չինել։

Ժամանակնիս չատ քիչ ըլլալուն մենք ստիպուեցանք բաժնուիլ սրուագին ակնարկ մը թողնելով եկեղեցւոյն և Աւմենոյին վրայ։ կը համարիմ որ այսպէս թերևս ոչ բոլորովին յուսախաբ կը թողնենք Աբմենոն, այլ աւելի ամրապնդուած նրա հայկականութեան. քանի որ բոլոր այն հեղինակներն որ խօսած են այդ եկեղեցւոյ մասին և զայն անխտիր արևելեան Բիւզանդական կոչած են, ես ինձ թոյլ կու տամ քայլ մ'ևս յառաջանալ և անուանել զայն հայկական, փափաքելով որ չուտով հասնի օրը, և աւելի լայն միջոցներով ազգային մը կարենայ պարզել Աւմենոյի բազմադարեան գաղտնիքը։

Հ. Վ. ԹՈՎՄԱՍԵԱՆ

ԱՐՄԵՆՈՑ. – Վիրափոխման տաճարը հիւսիսային կողմէն քաշուած

digitised by A.R.A.R.@